

News Release

Նոյեմբերի 22, 2021 թ.

**Հայաստանի ամերիկյան համալսարանը և HSBC Հայաստանն կազմակերպեցին
աշխատանքի ցուցահանդես «Որակյալ մասնագետներ որակյալ աշխատատեղերի
համար» համայնքային ծրագրի շրջանակում**

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) շարունակական կրթության բաժինը «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (HSBC Հայաստան) հետ համատեղ կազմակերպեցին աշխատանքի ցուցահանդես ֆինանսական և բանկային ոլորտներում երիտասարդ մասնագետների համար: Միջոցառումը տեղի ունեցավ նոյեմբերի 19-ին «Որակյալ մասնագետներ որակյալ աշխատատեղերի համար» համայնքային ծրագրի շրջանակում: Ծրագիրը ֆինանսավորվում է HSBC Հայաստանի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարության շրջանակում և ուղղված է սոցիալապես խոցելի խմբերի մարդկանց աջակցելուն՝ բարելավելով նրանց զբաղվածության մակարդակը:

Ծրագրի շնորհիվ սոցիալապես խոցելի խմբերից 86 երիտասարդներ՝ հիմնականում Երևանից, Գյումրիից և Վանաձորից, բարելավել են աշխատանքային հմտությունները «Բանկային գործ և ֆինանսներ» հավաստագրեր շնորհող ծրագրի միջոցով, որը մշակվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) շարունակական կրթության բաժնի կողմից: Սա հասանելի, գործնական և համապարփակ, երիտասարդների գիտելիքներն ու հմտությունները զարգացնող ծրագիր է, որը միտված է լրացնելու աշխատունակության բացը: Այն ինչպես աշխատանք փնտրողների, այնպես էլ առաջարկողների պահանջների հստակ սահմանման շնորհիվ ստեղծում է կամուրջ համապատասխան որակյալ և հասանելի կրթության միջոցով և օգնում է պատրաստել որակյալ ու աշխատունակ երիտասարդ մասնագետների:

Միջոցառման ժամանակ ծրագրի 86 շրջանավարտները հնարավորություն ստացան մասնակցելու աշխատանքի ցուցահանդեսին, որտեղ հանդիպեցին գործատուների HSBC-ից և առաջատար 13 այլ կազմակերպություններից, ներկայացրին իրենց փորձը և ստեղծեցին արժեքավոր կապեր:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀԱՀ շարունակական կրթության բաժնի ծրագրերի զարգացման ղեկավար Աննա Բաբաջանյանին՝ +374 60 61 27 01:

News Release

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ն՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 64 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել են 2,969 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը հիմնադրվել է 1996թ. -ին: Բանկը Էյչ-Էս-Բի-Սի Խմբին ամբողջությամբ պատկանող դուստր ընկերություն է: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 7 գրասենյակների և մոտ 310 աշխատակիցների միջոցով: 2021 թ. -ի սեպտեմբերի 30-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 311 միլիարդ ՀՀ դրամ՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Փի-Էլ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը: Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Հայաստանի ամերիկյան համալսարանը

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) մասնավոր, անկախ համալսարան է, որը հիմնադրվել է 1991 թվականին Երևանում: ՀԱՀ-ը հավատարմագրված է ԴԲԱԸ բուհերի հանձնաժողովի (WASC Senior College and University Commission) կողմից և հանդիսանում է Քալիֆորնիայի համալսարանի համագործակիցը: Բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի միջոցով ՀԱՀ-ը Հայաստանում և տարածաշրջանում տրամադրում է արևմտյան չափանիշներին համապատասխան բարձրակարգ կրթություն՝ միաժամանակ խթանելով նորարարությունը և հետազոտական աշխատանք կատարելը, քաղաքացիական ներգրավվածությունը, համայնքային ծառայությունը և ժողովրդավարական արժեքները: